ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩИНА СЕЛА ХОРОНК
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

<< Արմավիրի մարզ, գ. Խորոնք
Հեռ. /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

С. Хоронк Армавирской обл. РА
Тел. /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

N 87 02 08 2014г

<< Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Դահիրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում << Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի 2014 թվականի հուլիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները, կարգադրություններ չեն արձակվել :

Առդիր 3 էջ:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-30

Գ.ԽՈՐՈՆՔ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 2, 2ԵՌ. /0231/ 6-86-89

03 հուլիսի 2014 թ.

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 31-ի թիվ 7 նիստի թիվ 1 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի բնակիչ Քաջո Սենիկի Սենիքերիմյանի ընտանիքին պատկանող բնակելի տունը՝ կոդ 040-050-015-002, հասցեավորել Ա.Մանուկյան 1-ին փակուղի 2:

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային սպասարկման գրասենյակ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ /

03 հուլիսի 2014 թ.

գ. Խորոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-31

ԳԽՈՐՈՆՔ ՄԱՅԱՓ-ՆՈՎԱ 2, Հեռ.:0231/ 6-86-89

22 հուլիսի 2014թ.

«ԽՈՐՈՆՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒԸ «ԽՈՐՈՆՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 63-րդ հոդվածի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով

Որոշում եմ

1. «Խորոնքի բժշկական ամբուատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման ձևով որպես «Խորոնքի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ) վերակազմակերպելու մասին որոշման նախագիծ ներկայացնել համայնքի ավագանում հաստատմանը:
2. Որոշման նախագծով սահմանել, որ
   ա/Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն ընդունել Խորոնքի համայնքային հաշվեկշիռ՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1);
   բ/Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքը համաձայն Հավելված 1-ի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Խորոնքի համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա;

գ/Ընկերության տնօրինության տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքի ու շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդի:

3. Հաստատել՝

   ա/ՀՈԱԿ-ի գույքի կազմը՝ համաձայն Հավելված 2-ի:

4. Ավազանու հաստատմանը ներկայացնել ՀՈԱԿ-ի կանոնադրությունը:
5. Առաջարկել ավազանու ՀՈԱԿ-ի պետական գրանցումն իրականացնել Ընկերության միջոցների հաշվին:
6. Նախագծով սահմանել, որ կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի <<է>> ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Խորոնքի համայնքի ղեկավարին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս.Նահապետյան/